ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում ամերիկյան ականավոր լեզվաբան Նաում Չոմսկու հրապարակախոսական հոդվածը, որը ուշագրավ նյութ է պարունակում հասարակության և գրականության կապի մասին: Դա իր տեսակի վեճ է Ջորջ Օրուելի «1984» մեծ աղմուկ հանած վեպի հետ: Հոդվածը տպագրվել է 1986-ականներին: Թարգմանվում է կրճատումներով:

ՆԱՈՒՄ ՉՈՄՍԿԻ

ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ. ԱՄԵՐԻԿՅԱՆ ՈՃ

Մատնացույց անելով քարոզչության հսկայական զանգվածը, որը կառավարությունը և այլևայլ հաստատությունները տարածել են ամբողջ աշխարհում, դիտորդները մեր ժամանակաշրջանը անվանում են Օրուելի ժամանակաշրջան: Բայց իրողությունն այն է, որ Օրուելը հետո է ասպարեզ եկել: Դեռ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ամերիկյան պատմաբանները իրենց ծառայություններն առաջարկեցին նախագահ Վուդրո Վիլսոնին լուծելու «պատմության նախագծման» խնդիրը. նրանք նկատի ունեին այնպես ներկայացնել պատմության փաստերը, որ դա ծառայեր պետական քաղաքականությանը: Այս դեպքում ԱՄՆ–ի կառավարությունը ցանկանում էր լռեցնել պատերազմի ընդդիմախոսներին: Սա իրենից ներկայացնում է Օրուելի «1984»-ի մի տարբերակը:

1921-ին փառաբանված ամերիկյան լրագրող Ուոլտեր Լիպմանը ասաց, որ ժողովրդավարության արվեստը պահանջում է ունենալ «համաձայնության գործարան»: Այս դարձվածը մտքերի վերահսկողության՝ Օրուելին հարմար մեղմասություն է: Իմաստն այն է, որ այնպիսի պետության մեջ, ինչպիսին Միացյալ Նահանգներն են, որտեղ կառավարությունը չի կարող ուժով վերահսկել ժողովրդին, ավելի լավ է վերահսկել, թե ինչ են նրանք մտածում: Խորհրդային Միությունը իր տնաբույս ազատություններով սպեկտրի մեզ հակառակ կողմում է: Դա էապես մահակով վարվող պետություն է: Շատ հեշտ է սահմանել, թե ինչ է քարոզչությունը ԽՍՀՄ-ում. ինչ ասում է պետությունը, քարոզչություն է:

Նման իրողություններ է նկարագրում Օրուելը «1984»-ում (որն իմ կարծիքով այնքան էլ լավ գիրք չէ): «1984»-ը այսքան հայտնի է, որովհետև այն ծեծված (տրիվիալ) մի բան է և ուղղված է մեր թշնամիների դեմ: Եթե Օրուելը ուրիշ խնդրի դիմեր – մեր սեփական խնդիրներից – նրա գիրքը այդքան տարածված չէր լինի: Իրականում դա երևի չէր էլ տպագրվի:

Ամբողջատիրական հասարակություններում, որտեղ կա ճշմարտության նախարարություն, քարոզչությունը չի էլ փորձում վերահսկել ձեր մտքերը: Նա միայն ձեզ տալիս է կուսակցության գիծը: Նա ասում է. «Ահա պաշտոնական տեսակետը. ենթարկվեք, և դուք խնդիրներ չեք ունենա: Թե ինչ եք դուք մտածում, որևէ մեկի համար կարևոր չէ: Եթե դուք գծից դուրս գաք, մենք ձեզ կպատժենք, որովհետև մենք ուժ ունենք»: Ժողովրդավարական հասարակությունները չեն կարող այսպես վարվել, որովհետև ուժի օգնությամբ քաղաքացիների վարքը վերահսկելու պետության հնարավորությունները շատ ավելի սահմանափակ են: Քանի որ ժողովրդին խոսել թույլատրված է, այդպիսի հասարակությունները պետք է հսկեն, թե ինչ է ասվում, այսինքն՝ պետք է հսկեն մտածածը: Դրա ճանապարհներից մեկը քաղաքական բանավեճեր վարելն է, որոնք կարծես թե ընդգրկում են տարբեր կարծիքներ, բայց այդ վեճերը մնում են շատ նեղ շրջանակներում: Դուք պետք է վստահ լինեք, որ վեճի երկու կողմերն ընդունում են որոշակի դրույթներ, և որ այդ դրույթները քարոզչական համակարգի հիմքն են: Եվ այնքան ժամանակ, քանի դեռ ամեն մեկն ընդունում է քարոզչական համակարգը, վիճաբանությունը թույլատրելի է:

Վիետնամի պատերազմը ամերիկյան քարոզչական համակարգի տիպիկ օրինակ է: Զանգվածային տեղեկատվության առաջատար միջոցներում՝ «Նյու-Յորք թայմզ», ՉիԲիՍի և այլն, պատերազմի մասին աշխույժ վեճեր էին գնում: Վիճաբանում էին «աղավնի» կոչվածները և «բազե» կոչվածները: Բազեներն ասում էին. «Եթե մենք շարունակենք, կհաղթենք»: Աղավնիներն ասում էին. «Եթե մենք շարունակենք, դա կարող է մեզ շատ թանկ նստել, և, բացի այդ, կարող է այնպես ստացվել, որ մենք չափազանց շատ մարդ սպանենք»: Երկու կողմն էլ մի բանում համաձայն էին: Մենք իրավունք ունենք ագրեսիա կազմակերպելու Հարավային Վիետնամի դեմ: Բայց աղավնիներն էլ, բազեներն էլ չէին ընդունում, որ ագրեսիա է տեղի ունեցել: Նրանք երկուսն էլ մեր ռազմական ներկայությունը Հարավային Վիետնամում անվանում էին Հարավային Վիետնամի պաշտպանություն՝ «ագրեսիան» փոխարինելով «պաշտպանությամբ»՝ ճիշտ և ճիշտ Օրուելի նկարագրած ձևով:

Քննենք մի քանի փաստ: 1962 թ. ԱՄՆ-ի օդային ուժերը սկսեցին Հարավային Վիետնամի գյուղական շրջանների ուղղակի գրոհները՝ ռմբակոծելով և թունավորելով դրանք: Դա մասն էր մի ծրագրի, որի նպատակը միլիոնավոր մարդկանց ներկալվածների ճամբարներ քշելն էր. այնտեղ, շրջապատված փշալարերով և զինված պահակախմբերով, նրանք «պաշտպանված» պետք է լինեին պարտիզաններից, «Վիետկոնգից», որը նախկին հակաֆրանսիական դիմադրության հարավային մասնաճյուղն էր: Բայց նրանք պաշտպանում էին այդ պարտիզաններին: Սա հենց այն է, որ մեր կառավարությունը անվանում է ագրեսիա կամ ներխուժում, եթե դա կատարվում է որևէ պաշտոնական թշնամու կողմից: Սայգոնյան կառավարությունը օրինական չէր և շատ փոքր հենարան ուներ, և դրա ղեկավարները հաջորդաբար տապալվում էին ԱՄՆ-ի պաշտպանությունը վայելող հեղաշրջումների ժամանակ, եթե երկյուղ էր առաջանում, որ նրանք կարող էին համաձայնության գալ Վիետկոնգի հետ: Մոտ 70 000 վիետնամցիներ էին սպանվել ԱՄՆ-ի ղեկավարած ահաբեկչական գործողությունների ժամանակ դեռ մինչև ԱՄՆ-ի բացահայտ ներխուժումը Վիետնամ 1972 թ.:

Ինչպես Սովետները Աֆղանստանում, մենք փորձեցինք Վիետնամում մի կառա-

վարություն հաստատել, որ մեզ հրավիրեր զորք մտցնել: Մենք պետք է իրար ետևից փոխարինեինք մի ռեժիմը մյուսով: Ի վերջո, մենք ուղղակիորեն մտանք Վիետնամ: Դա պարզ ագրեսիա էր: Բայց մեր վիետնամական քաղաքականության սկզբունքային հակառակորդներից որևէ մեկը հնարավորություն չստացավ մասնակցելու պատերազմի մասին ծավալվող վեճերին: Վեճերը էապես գնում էին միայն մարտավարության մասին: Նույնիսկ հակապատերազմական ընդդիմության շարժման ամենաբարձր վերելքի ժամանակ մտավորականության միայն մի չնչին մասը պատերազմի դեմ հանդես եկավ սկզբունքային դիրքերից, գտնելով, որ ագրեսիան ինքը սխալ է: Մտավորականության մեծ մասը ընդդիմադիր դիրքեր գրավեց միայն այն ժամանակ, երբ առաջատար գործարար շրջանները քննադատեցին պատերազմը և այդ բոլորը՝ զուտ «պրագմատիկական» դիրքերից՝ գինը չափազանց բարձր է:

Զարմանալիորեն բոլոր վեճերից դուրս էր մնում այն տեսակետը, որ Միացյալ Նահանգները կարող են և հաղթել, բայց սխալ կլինի թույլ տալ, որ այդպիսի ագրեսիան հաջողվի: Սա իրական խաղաղության շարժման տեսակետն էր, որը շատ հազվադեպ էր ուշադրության արժանանում զանգվածային լրատվության գլխավոր միջոցների կողմից: Եթե դուք վերցնեք ամերիկյան պատմությունը ներկայացնող որևէ գիրք և կարդաք վիետնամական պատերազմի մասին, կտեսնեք, որ այնտեղ չկա այնպիսի իրադարձություն, ինչպիսին էր ամերիկյան հարձակումը Հարավային Վիետնամի վրա: Վերջին 22 տարում ես առաջատար լրագրության մեջ կամ գիտական հետազոտություններում իզուր փնտրել եմ գոնե մի հիշատակություն «Հարավային Վիետնամ ամերիկյան ներխուժման» կամ Հարավային Վիետնամում ամերիկյան «ագրեսիայի» մասին: Ամերիկյան գաղափարախոսության մեջ այդպիսի փաստ չկա: Դա պատմությունից դուրս է, դա նետվել է Օրուելի հիշողության փոսը:

Եթե ԱՄՆ-ը ամբողջատիրական պետություն լիներ, ճշմարտության նախարարությունը պարզապես կասեր. «Մեզ անհրաժեշտ էր մտնել Վիետնամ: Մի՛ վիճեք դրա հետ»: Ժողովուրդը կհասկանար դա իբրև քարոզչության համակարգ և կշարունակեր մտածել, ինչ որ ուզում է: Մարդիկ պարզապես կտեսնեին, որ մենք գրոհում էինք Վիետնամը այնպես, ինչպես կարող ենք տեսնել, որ Սովետները գրոհում են Աֆղանստանը:

Մարդիկ Միացյալ Նահանգներում շատ ավելի ազատ են, նրանք իրավունք ունեն իրենց մտածածն ասելու: Ահա թե ինչու անհրաժեշտ է, որպեսզի իշխանությունները վերահսկեն ամեն մեկի մտքերը, ձգտեն պարզ դարձնել, որ քննարկման միակ ելակետը կարող է լինել այն, որ ԱՄՆ-ի ներխուժումը Վիետնամ մարտավարական բնույթ ունի: Կարող ե՞նք մենք շահել դա: Չկա որևէ վեճ ճշտի ու սխալի շուրջ:

Վիետնամական պատերազմի ընթացքում ամերիկյան քարոզչական համակարգը իր գործը կատարեց մասնակիորեն, ոչ ամբողջությամբ: Կրթված մարդկանց շրջանում այդ համակարգը լավ էր աշխատում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բնակչության ավելի կրթված մասի կողմից կառավարական քարոզչությունը պատերազմի մասին ընդունվում է առանց կասկածների: Պատճառներից մեկը, որ քարոզչությունը կրթվածների վրա ավելի շատ է ազդում, քան կրթություն չստացածների վրա, այն է, որ կրթվածները ավելի շատ են կարդում և ուրեմն ավելի շատ քարոզչություն են ստանում: Մյուս պատճառն այն է, որ նրանք աշխատում

են մենեջմենթի մեջ, լրատվական միջոցներում, ակադեմիական հաստատություններում և ուրեմն ինչ-որ իմաստով քարոզչական համակարգի գործակալներ են. ուստի նրանք հավատում են նրան, ինչի որ պետք է հավատան ըստ նույն համակարգի: Ընդհանուր առմամբ, նրանք արտոնյալ ընտրախավի մի մասն են և բաժանում են այն շահերն ու ըմբռնումները, որոնք հատուկ են իշխանավորներին:

Մյուս կողմից կառավարությունը խնդիրներ ունի բնակչության մեծ մասի կարծիքների վերահսկողության գործում: Վերջին մի քանի հարցումների տվյալներով ամերիկացիների 70 տոկոսից ավելին մինչև հիմա էլ գտնում է, եթե ասենք Գելապի հաստատության խոսքերով, որ պատերազմը ոչ թե վրիպում էր, այլ հիմնավորապես սխալ և անբարոյական մի բան: Եթե դատենք վիետնամական պատերազմի հանդեպ լայնորեն տարածված ընդդիմությամբ, քարոզչական համակարգը կորցրել է իր իշխանությունը շատ ամերիկացիների մտքերի վրա: Նրանք թերահավատությամբ են վերաբերվում այն ամենին, ինչ լսում են: Այս դեպքում հավատի քայքայումն իր անունն ունի: Դա կոչվում է «վիետնամական սինդրոմ», ամերիկյան ընտրախավի համար՝ ծանր հիվանդություն, որովհետև ժողովուրդը չափազանց շատ բան հասկացավ:

Մեզ հաճախ ասում են, որ Սալվադորը նոր սկզբնավորվող ժողովրդավարության երկիր է, այդ պատճառով էլ նա չի կարող պաշարողական դրություն հայտարարել: Համաձայն վերջին սալվադորյան նորությունների, Դուարտեն կազմում է կենտրոնամետ չափավոր կառավարություն աջ և ձախ ահաբեկիչների գրոհների պայմաններում: Սա բացարձակ անհեթեթություն է: Մարդու իրավունքների յուրաքանչյուր քննություն, նույնիսկ ԱՄՆ-ի կողմից կատարված, ցույց է տալիս, որ ահաբեկչությունը կատարվում է իր՝ կառավարության կողմից: Մահվան գումարտակները նույն անվտանգության ուժերն են: Դուարտեն ընդամենը ցուցանակ է ահաբեկիչների համար: Բայց սա հազվադեպ է հրապարակավ ասվում: Այս ամենը համապատասխանում է Ուոլտեր Լիպմանի «համաձայնության գործարանին»: Ժողովրդավարությունը թույլ է տալիս, որ ժողովրդի ձայնը լսվի, և ինտելեկտուալների խնդիրն է վստահեցնել, որ այս ձայնը հաստատում է այն, ինչ առաջնորդները համարում են ճիշտ ուղղություն: Քարոզչությունը ժողովրդավարության համար այն է, ինչ բռնությունը ամբողջատիրության համար: Քարոզչության տեխնիկան բարձր արվեստի մակարդակի է հասել ԱՄՆ-ում և այլուր, շատ ավելի բարձր, քան կարող էր երևակայել Օրուելը: Ձևական տարածայնությունների մեխանիզմը (որն օգտագործում էին, օրինակ, վիետնամական պատերազմի շրջանի «աղավնիները», քննադատելով պատերազմը արդյունավետության և ոչ սկզբունքների տեսակետից) մեկն է այն նուրբ հնարանքներից, որոնք թեև պարզապես ստում են և բռնանում փաստերին, սակայն շատ արդյունավետ են:

Նրանք, ովքեր համառորեն ազատություն են փնտրում աշխարհում, ավելի կարևոր խնդիր չունեն, քան հասկանալ քաղաքական ներշնչման մեխանիզմները և գործողությունները: Հեշտ է հասկանալ ամբողջատիրական հասարակությունները, շատ ավելի դժվար՝ քարոզչական համակարգերը, որոնց մենք ենթակա ենք և որոնց չափազանց հաճախ մենք ծառայում ենք իբրև անկամ և անմիտ գործիքներ: